ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 փետրվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

25
(3056)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության եզրակացությունների հարցում արդեն ավարտական փուլին է հասել:

Այս պահին հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուները հինգն են՝ փաստաբան Կարեն Բատիկյանը, Սերժ Սարգսյանի դեմ հարուցված քրեական գործով քննիչ Արտաշես Մայիլյանը, քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Նահապետյանը, վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Պետրոս Մարտիրոսյանը եւ Գեւորգ Քոչարյանը, որը Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատախազ է, եւ որպես դատախազ ներգրավված է ապօրինի գույքի բռնագանձման վերաբերյալ մի շարք աղմկահարույց գործերով:

Նկատենք, որ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար երկրորդ անգամ է անցկացվում մրցույթ, քանի որ առաջին մրցույթում միակ թեկնածու Ռաֆայել Երիցյանը չհաղթահարեց մրցույթը:

Նշենք, որ մինչեւ Կառավարության կողմից նշանակվելը, նախագահի ընտրությունը մի քանի փուլով է անցնում: Նախ թեկնածուների փաստաթղթերն են ուսումնասիրվում՝ արդյոք թեկնածուները համապատասխանում են չափանիշներին. դրական կարծիքի դեպքում արդեն մրցութային խորհուրդը քննության օր է նշանակում եւ ուղիղ եթերում քննում թեկնածուներին, որից հետո բարեվարքությունն են քննում, ապա թեկնածուները մասնագիտական հարցերին են պատասխանում: Առավելագույն միավորներ հավաքած թեկնածուներից մեկն էլ ընտրվում է նախագահ:

Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի առաջիկայում դատաիրավական համակարգում լուրջ փոփոխություններ իրականացնել: «Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ամերձ աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանը նպատակադրված է «վերից վար» փոխելու դատաիրավական համակարգը, անգամ ինչպես ինքն է նշել՝ իր մտերիմ ՔՊ-ականների ներկայությամբ կադրային լուրջ փոփոխություններ իրականացնել ուժայիններում: Եվ դա է պատճառներից մեկը, որ նախօրեին Փաշինյանը ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի գլխավորությամբ Կառավարություն է հրավիրել իրավական ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ մեկտեղելով սեղանի շուրջ: Վարչապետ Փաշինյանը, դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարության գործողությունների ծրագրի անվան տակ, խորհրդակցություն է անցկացրել: Ի դեպ, «Ժողովուրդ»-ի աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանի հիմնական դժգոհությունը դատական գործերի երկար քննություններն են, որի արդյունքում իրենց իշխանությունը հեղինակազրկվում է: Փաշինյանը հորդորել է նոր նախարարին հարցին արագ լուծում տալ:



Այսօր Հակակոռուպցիոն դատարանում կավարտվի ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի դեմ հարուցված քրեական գործով քննությունը եւ, ըստ էության, դատավոր Վահե Դոլմազյանը կգնա որոշում կայացնելու: Դատելով իրավիճակից՝ դատավոր Դոլմազյանը չի խնայի ոչ ոքի: Բանն այն է, որ նա ԱԺ նախկին պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի դեմ հարուցված քրեական գործով մեղադրող դատախազն էր ու չէր խնայում անգամ ծայրահեղ վիճակում գտնվող գեներալին: Դեռեւս 2019 թվականին Ազգային ժողովի նախկին պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի պաշտպանական կողմը մի քանի անգամ միջնորդություն էր ներկայացրել դատարան՝ մինչեւ 5 մլն դրամ գրավի դիմաց Գրիգորյանին կալանքից ազատ արձակելու համար, քանի որ նա ծայրահեղ ծանր վիճակում էր: Սակայն մեղադրող դատախազը Վահե Դոլմազյանն էր, ու նա հակադարձել էր, թե Գրիգորյանը գտնվում է բավարար հսկողության ներքո, եւ փաստաբանների նշած հիմնավորումները փաստարկված չեն: Արդյունքում, ավելի քան մեկուկես տարի անազատության մեջ գտնվելուց հետո՝ 2020-ի հունվարի 15-ին, գեներալ Մանվել Գրիգորյանի խափանման միջոց կալանքը փոխարինվեց չհեռանալու մասին ստորագրությամբ: Խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության հարցը քննարկվեց այն բանից հետո, երբ Գրիգորյանի առողջական վիճակը վատթարացավ, ու նա ամիսներ անց մահացավ:



Երեկ Նիկոլ Փաշինյանը ՔՊ-ական պատգամավորներին, նախարարներին հավաքել էր ԱԺ-ում՝ փակ հանդիպում ունենալու: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանը շուրջ երկու ժամ խոսել է՝ պատասխանելով ՔՊ-ականների այն հարցին, թե ինչ է սպասվում ՀՀ-Ադրբեջան փոխհարաբերություններին: Ըստ մեր աղբյուրների՝ Փաշինյանն այս անգամ լարված չի եղել, հիմնականում արձագանքել է, որ չպետք է շտապեն, այլ պիտի փորձեն Ադրբեջանի առաջարկները երկար քննարկել, նոր պատասխանել: Նիկոլ Փաշինյանը նաեւ վստահեցրել է, որ այս պահին էսկալացիաների վտանգ չկա: Վարչապետը լրագրողների ներկայությամբ հայտարարեց նաեւ, որ Խաղաղության պայմանագրի չհամաձայնեցված երկու հոդվածներից մեկը վերաբերում է սահմանի երկայնքով երրորդ երկրների ուժերի տեղակայմանը, մյուսը՝ միջազգային ատյաններում իրավական եւ այլ վեճերին: Հստակ պատասխան, ըստ մեր աղբյուրների, ոչ մի հարցի ժամանակ չի հնչել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԵԾ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայ Հեղափոխական Դաշնակցության» Գերագույն մարմնի ներկայացուցիչ, Ազգային Ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանի հետ: Զրուցել ենք ՀՅԴ-ում առկա լարվածության, խնդիրների, դժգոհությունների մասին: Նա ներկայացրել է, թե իրականում ինչ իրավիճակ է «Դաշնակցությունում», ու այդ դժգոհությունները ինչի պատճառ կամ հետեւանք են: Պատգամավորը խոսել է առաջիկայում կայանալիք Գերագույն մարմնի ժողովի մասին:

-Պարոն Սաղաթելյան, քննադատություն կա, որ ընդդիմությունը նստած է խորհրդարանում եւ դուրս չի գալիս փողոց. իշխանությունների հետ գործուղումների եք մեկնում եւ որեւէ քայլ չեք անում: Ի՞նչ կասեք այս մասին:

-Եթե մենք վաղը դուրս գանք փողոց, միեւնույնն է՝ նորից քննադատելու են, որ դուրս ենք եկել փողոց: Մենք ամեն տեղ՝ խորհրդարանում, խորհրդարանից դուրս, Հայաստանի մարզերում, մեծ ու փոքր քաղաքներում հետեւողականորեն մեր աշխատանքը անելու ենք:

-Պարոն Սաղաթելյան, անդրադառնանք «Դաշնակցության» ներսում կատարվող իրադարձություններին: Տեղի ունեցավ «Դաշնակցության» Բյուրոյի հավաքը: Ի՞նչ քննարկումներ ունեցաք ներսում: Խոսակցություններ եղան, որ «Դաշնակցության» ներսում տարաձայնություններ կան: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Այո, տեղի ունեցավ «Հայ Հեղափոխական Դաշնակցության» ընդհանուր ժողովը: Այն տեղի է ունենում 4 տարին մեկ անգամ: Այս խոսակցությունները, որոնք Դուք բարձրաձայնում եք, նորմալ են: Բոլոր ընդհանուր ժողովներից առաջ նման խոսակցություններ եղել են, որովհետեւ այդ ընդհանուր ժողովներից կա մեծ սպասելիք. նախ՝ ժողովի ընթացքում կուսակցության հաշվետվություն է տրվում անցած 4 տարիների գործունեության վերաբերյալ: Որոշվում է առաջիկա տարիների ռազմավարությունը, մարտավարությունը, քաղաքականությունը եւ ընտրվում է նոր ղեկավար մարմին: «Դաշնակցությունը», իբրեւ համահայկական ազգային կառույց, այդ ընդհանուր ժողովներին մշտապես մեծ սպասումների տեղիք է տալիս: Այնպես որ, Ձեր նշած խոսակցությունները նոր չեն, միշտ էլ եղել են:

-Ի՞նչ խոսակցություններ եւ տարաձայնություններ կան թիմում: Օրինակ՝ մի հատվածը պայքարի այլ ձեւ է առաջարկում, մյուս հատվածն այլ բան է ասում:

-Ես չեմ կարող հարցազրույցով պատմել, թե ինչ ենք քննարկում «Դաշնակցության» ընդհանուր ժողովում:

-Կուսակցության ներսում տեղի ունեցող տարաձայնությունների մասին կխոսե՞ք: Գերագույն մարմնի ներկայացուցչի մասին ի՞նչ քննարկումներ են եղել:

-Որպեսզի իմանաք, թե Ձեր տեղեկությունները, որքանով են հեռու իրականությունից, նշեմ՝ «Դաշնակցության» ընդհանուր ժողովում գերագույն մարմնի ներկայացուցչի հարց չի որոշվել: Դա լրիվ այլ պրոցես է: Իսկ ինչ վերաբերում է, որ «Դաշնակցության» ներսում անհանգստություններ, տարաձայնություններ կան, ապա դա նորմալ է: Անբնական կլիներ, եթե «Դաշնակցությունում» ամեն ինչ լիներ հանգիստ, առանց դժգոհության: Ինչո՞ւ, որովհետեւ մեր երկրի վիճակն է շատ ծանր եւ անհանգիստ, իսկ «Դաշնակցության» վիճակը անմիջականորեն կապված է մեր երկրում ստեղծված իրավիճակի հետ: Չի կարող մեր կուսակցությունում դժգոհություն չլինել, կրքեր չլինեն, տարակարծություններ չլինեն այն պարագայում, երբ երկիրը կանգնած է շատ ծանր մարտահրավերների առջեւ, երբ Արցախը հայաթափված է: «Դաշնակցությունը» շատ առողջ օրգանիզմ է, այս կուսակցությունը 135 տարի պատահական չէ, որ կարողացել է դիմագրավել տարբեր մարտահրավերների: Ես հանգստացնում եմ բոլոր անհանգիստներին. մի՛ մտահոգվեք եւ անհոգ եղե՛ք: «Դաշնակցությունն» ունի այդքան խոհեմություն՝ ցանկացած իրավիճակից ուժեղ դուրս գալու համար:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԲԱՔՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության աշխատակիցները երեկ այցելել են Քաքվում ադրբեջանի պահվող հայ գերիներին: Այս մասին տեղեկացրել է Կարմիր խաչի միջազգային կազմակերպության պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին: Նրանց հնարավորություն է տրվել կապվել ընտանիքների հետ: Տեսակցությունները ընթացել են առանձնազրույցների ձեւաչափով: Նշենք, որ նախորդ այցելությունը եղել էր 2025 թվականի հունվարին:

Հիշեցնենք՝ Բաքուն պաշտոնապես հաստատում է 23 հայերի գերեվարման փաստը, որոնցից 17-ը հայտնվել են այնտեղ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի՝ 2023 թվականի սեպտեմբերյան ագրեսիայից հետո:

Նրանց թվում են Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչները՝ Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, պաշտպանության բանակի հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, Արցախի նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը, Արցախի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանն ու Արայիկ Հարությունյանը:

Հիշեցնենք, որ փետրվարի 25-ին Բաքվի դատարանում շարունակվում էր Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի գործով դատավարությունը: Վարդանյանը մեղադրվում է Ադրբեջանի դեմ պատերազմ ծրագրելու, նախապատրաստելու եւ իրագործելու, ահաբեկչության ֆինանսավորման, հանցավոր կազմակերպություն ստեղծելու, ապօրինի զենք-զինամթերք ձեռք բերելու, տեղափոխելու, կտտանքներ իրականացնելու, մարդկանց տեղահանելու համար: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ նիստը նախագահում է Բաքվի ռազմական դատարանի դատավոր Ջեյնալ Աղաեւը:

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդանյանի առողջական վիճակը, դատական նիստի ընթացքում, կտրուկ վատացել էր եւ ստիպված էին եղել դատը ընդհատել:

ՀԵՌԱՑՐԵԼ Է ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

ԱԺ պատգամավոր, ՔՊ-ից հեռացված Հակոբ Ասլանյանը, հետեւելով ընկերոջ՝ Հովիկ Աղազարյանի օրինակին, իր աշխատասենյակից հեռացրել է Նիկոլ Փաշինյանի լուսանկարը: ArmLur.am-ի հետ զրույցում պատգամավորը հաստատեց տեղեկությունը՝ նշելով, որ ինքն այլեւս ՔՊ կուսակցության անդամ չէ, Նիկոլ Փաշինյանն էլ իր առաջնորդը չէ, ուստի տրամաբանական է, որ Փաշինյանի լուսանկարն այլեւս իր սենյակում չէ: Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանը եւս, ՔՊ-ից հեռացվելուց հետո, իր աշխատասենյակից հեռացրել է Փաշինյանի լուսանկարը:

Հիշեցնենք, որ Հովիկ Աղազարյանը եւ Հակոբ Ասլանյանը ՔՊ-ից հեռացվել էին 2024 թ.-ի դեկտեմբերին: Թիմակիցները Հովիկ Աղազարյանին մեղադրում էին պետական եւ կուսակցական նշանակության կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսքերի, ինչպես նաեւ հանրության բարոյական նորմերի կոպիտ խախտումների համար, թեեւ այդպես էլ չհիմնավորվեց՝ ինչ արտահոսք է տեղի ունեցել, իսկ Հակոբ Ասլանյանին հեռացրին իշխող թիմից Փաշինյանին չենթարկված Հովիկ Աղազարյանին պաշտպանելու համար: ՔՊ-ից հեռացվելուց հետո Հովիկ Աղազարյանը եւ Հակոբ Ասլանյանը ստեղծեցին «Միացյալ ազգային սոցիալիստական կուսակցությունը» եւ հիմա հանդես են գալիս Նիկոլ Փաշինյանի ընդդիմադիրների դիրքերից:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԽՈՍԵԼ ԵՆ

Երեկ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը զանգահարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Իլհամ Ալիեւը շնորհավորել է Ռեջեփ Էրդողանին ծննդյան օրվա առթիվ եւ մաղթել նորանոր հաջողություններ նախագահական գործունեությունում: Պետությունների ղեկավարները վստահություն են հայտնել, որ կշարունակեն այսուհետ եւս հաջող զարգանալ, ինչպես նաեւ մտքեր են փոխանակել երկկողմ հարաբերությունների հեռանկարների, հետագա շփումների եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:

ՄԵԿՆԵԼ Է ԹՈՒՐՔԻԱ

Այսօր Ռուսաստանի Դանշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն Թուրքիայի խորհրդարանի նախագահ Նուման Քուրթուլմուշի պաշտոնական հրավերով կմեկնի Թուրքիա:

Նախատեսվում է, որ կողմերի միջեւ կկայանա առանձնազրույց, որից հետո խորհրդարանում Քուրթուլմուշը եւ Մատվիենկոն կնախագահեն միջպատվիրակությունների բանակցությունները եւ հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով:

Հիշեցնենք, որ փետրվարի 23-ին էլ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն էր մեկնել Թուրքիա եւ հանդիպել Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի հետ:

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԿԵՂԾԵԼՈՒ

Այս ապօրինի իշխանությունների դեմ պայքարի գործում «Դաշնակցությունը» միշտ առաջին գծում է, եւ թե՛ փողոցային պայքարով, թե՛ ընտրությունների միջոցով միշտ էլ պայքարելու է, որ այս իշխանություններին օր առաջ վռնդի:

Այս մասին, նշել է ՀՅԴ-ական, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Դառնիկ Գանիելյանը՝ պատասխանելով այն հարցին՝ սպասելո՞ւ են ընտրություններին, թե՞ այլ պայքարի միջոց են ընտրելու իշխանությունների դեմ:

««Դաշնակցությունն» այն կուսակցությունն է, որ չի սպասում ընտրությունների: Այս ընթացքում մի քանի շարժումների նախաձեռնողն ու առաջամարտիկն է եղել, եւ այդ առումով մենք ոչ թե սպասում ենք հերթական ընտրություններին, այլ ամենօրյա աշխատանք ենք տանում այս իշխանություններին հեռացնելու համար: Դա ավելի քան ակնհայտ է: Մեր ընկերներից շատերն անազատության մեջ են եղել, որոշները մի քանի օր առաջ են ապօրինի ազատազրկումից դուրս եկել, որոշ դաշնակցականների գործերն հենց հիմա դատարաններում քննվում է, բայց այն, որ ցանկացած կուսակցություն ընտրություններից հետո պետք է պատրաստվի ընտրությունների, դա չգրված օրենք է»,- ասել է նա: Դանիելյանը միեւնույն ժամանակ նշելէ, որ այս իշխանությունների դեպքում պետք է ամեն ինչ անեն, որ ընտրությունների չհասնի գործը, որովհետեւ այս իշխանությունները պատրաստ են ընտրությունները կեղծելու:

Անդրադառնալով Գյումրու ընտրություններին՝ նա ասել է, որ անմասն չեն մնում ոչ մի ընտրություններից. «90 տոկոս մենք ընտրություններին մասնակցում ենք, Գյումրու ընտրություններին առանձին կգնանք, ինչ-որ մեկին կսատարենք, թե ոչ, կորոշի կուսակցությունը, բայց դիտորդի կարգավիճակում չենք լինելու»,- ասաց նա:

64,750 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՏՈՒԳԱՆՔ

Վարձու աշխատողին աշխատանքի ընդունելիս հարկ վճարողը պարտավոր է ապահովել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունումը կամ գրավոր պայմանագրի կնքումը, իսկ նոր աշխատողի համար՝ սահմանված ժամկետում հարկային մարմին պետք է ներկայացնել գրանցման հայտ, կամավոր աշխատողի դեպքում՝ նրա հետ պետք է կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:

ՊԵԿ-ի փոխանցմամբ՝ այս ուղղությամբ իրավախախտումների կանխարգելումը եւ հսկողությունը կարեւոր է յուրաքանչյուր աշխատողի, ինչպես նաեւ օրենքի դաշտում գործող բիզնեսի համար:

Հունվարին վարձու աշխատողի չձեւակերպման դեպքեր արձանագրվել են 66 հարկ վճարողի շրջանում. տուգանքի չափը կազմել է 64,750 մլն դրամ:

ՎԵՐԼՈՒԾԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԳԵՏԸ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԳԻՏԻՄ ՉԷ

Նոր Սահմանադրության հնարավոր ընդունման վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է սահմանադրագետ Գոհար Մելոյանի հետ:

Ըստ նրա՝ Նիկոլ Փաշինյանը Սահմանադրության լեգիտիմության վերաբերյալ իր հայտարարությամբ նռնակ է նետում իր սեփական իշխանության վրա, քանի որ «իրենք 2018 թվականին եկել են իշխանության, ստանձնել են պաշտոններ եւ յոթ տարի շարունակ իշխանավարել են հենց այդ փաստաթղթի հիման վրա: Եթե ինքը իրեն թույլ է տալիս ոչ լեգիտիմ, կամ նվազ լեգիտիմ անվանել Սահմանադրությունը, հետեւաբար ոչ լեգիտիմ են նաեւ իրենք եւ իրենց իշխանությունը», - նշում է իրավաբանը:

Նաեւ այդ սահմանադրության հիման վրա կատարվել են նշանակումներ, իրականացվել են տարբեր գործառույթներ եւ լիազորություններ, ընդունվել են հրամանագրեր եւ կարգավորումներ:

Փաստորեն, եթե սահմանադրությունը լեգիտիմ չէ, գործող քաղաքական իշխանությունը եւս լեգիտիմ չէ, եզրակացնում է մեր զրուցակիցը:

Գոհար Մելոյանը թերահավատ է, որ Նիկոլ Փաշինյանին կհաջողվի 1995 թվականին ընդունված Սահմանադրությանը լեգիտումությամբ մոտ փաստաթուղթ ընդունել, ըստ նրա դիտարկման՝ «այդ փաստաթուղթը թե՛ նախագծվելիս, թե՛ ընդունվելիս ունեցել է համաժողովրդական աննախադեպ լայն աջակցություն»:

Ըստ Մելոյանի՝ նոր Սահմանադրություն ունենալու անհրաժեշտությունն առաջացավ, քանի որ իշխանությունը խնդիր ունի փոփոխելու Սահմանադրության նախաբանը եւ Սահմանադրության անփոփոխելի հոդվածները:

Սահմանադրագետը նաեւ հիշեցնում է այն մասին, որ նախորդ տարվա փետրվարին Նիկոլ Փաշինյանը խոսեց նոր Սահմանադրության ընդունման մասին. այդ ելույթը հաջորդել էր Ադրբեջանի ղեկավարի պահանջին՝ առ այն, որ մեր երկրում տեղի ունենան սահմանադրական փոփոխություններ:

Որպեսզի կատարեն ադրբեջանական պահանջը, իշխանությունները խնդիր ունեն հրաժարվել Սահմանադրության մեջ տեղ գտնող անկախության հռչակագրի հղումից, իսկ Սահմանադրական փոփոխություններով դա հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ է նոր Սահմանադրության ընդունում:

Մեր զրուցակցի կարծիքով՝ իշխանությունները նոր Սահմանադրության ընդունումը փաստող անհրաժեշտության մասին չեն խոսում: Հնարավոր նոր Սահմանադրությունում կմախքային դրույթների վերաբերյալ որեւէ էական փոփոխություն չկա: Իշխանության ներկայացուցիչները բազմիցս հայտարարել են, որ խորհրդարանական կառավարման մոդելը իրենց համար ընդունելի է, նաեւ չեն ներկայացնում իշխանությունների հակակշռման եւ զսպման մեխանիզմների էական փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ:

Ըստ Գոհար Մելոյանի՝ «Ակնհայտ է դառնում, որ իրենք ինչ-որ կերպ խնդիր ունեն հիմնավորելու նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը, ու ստիպված ինչ-որ սոփեստական, իրավափիլիսոփայական անհասկանալի մտքերով ներկայացնում են»:

Գոհար Մելոյանի համոզմամբ նոր Սահմանադրության ընդունումը որեւէ կերպ չի արտացոլելու հայկական շահերը:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՀԱՏԻԿ ԱՌ ՀԱՏԻԿ»–Ի ՇԱՐՔԻՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցիալական ցանցի իր էջում գրել է. «#հատիկառհատիկ, դատարանի վճռով, Երեւան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում գտնվող 12 հազար 400 քմ մակերեսով հողամասի նկատմամբ, որպես ապօրինի ձեռքբերված գույք, վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: Շուկայականին մոտարկված արժեքը՝730 միլիոն դրամ»:

ԽՈՄՆԱԿԻ ՏՈՒՆԸ ԹԱԼԱՆԵԼ ԵՆ

Երեկ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը եւ Երեւանի քրեական վարչությունը մի խումբ անձանց է վնասազերծել, ովքեր կասկածվում են ինչպես Երեւանում այնպես էլ մարզերում պաշտոնատար անձանց տները թալանելու համար: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ այս օպերացիայի իրականացումը խոր արմատներ ունի: Բանն այն է, որ օրեր առաջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի՝ Աջափնյակում գտնվող բնակարանն են թալանել եւ խոշոր չափերի գումար են հափշտակել բնակարանից: Եվ ահա այս դեպքից հետո Նիկոլ Փաշինյանը անձամբ է ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանին եւ Արփինե Սարգսյանին հրահանգ տվել գործուն քայլեր անել բնակարանային գողությունները բացահայտելու համար, ու արդյունքում վնասազերծվել են մի խումբ անձինք, որոնք կասկածվում են այն կատարելու համար: Հիշեցնենք նաեւ, որ 2024 թվականի դեկտեմբերին էլ թալանել էին վարչապետի աներորդու՝ Հրաչյա Հակոբյանի տունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԿԱՅԱՆԱ

Կա ըմբռնում, որ Ռուսաստանի Դաշնության եւ ԱՄՆ նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Դոնալդ Թրամփի անձնական հանդիպումը պետք է կայանա, սակայն մանրամասների վերաբերյալ հստակ պարզաբանումներ դեռ չկան: Այս մասին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Անձնական հանդիպման հետ կապված դեռ պարզաբանումներ չկան:

Կա ըմբռնում, որ դա պետք է տեղի ունենա, եւ կա ըմբռնում, որ այն պետք է լավ պատրաստվի: Սա երկու նախագահների ըմբռնումն է»,-ասել է Պեսկովը: Կրեմլի ներկայացուցիչը նշել է, որ «այժմ տեղի է ունենում այն պայմանավորվածությունների փուլ առ փուլ իրականացումը, որոնք ձեռք են բերվել ինչպես պետությունների ղեկավարների, այնպես էլ բարձր մակարդակի պատվիրակությունների կողմից Էր Ռիադում կայացած բանակցություններում»: Նա ավելացրել է, որ արտաքին գործերի նախարարությունների միջոցով փորձագիտական մակարդակով շփումներ են նախապատրաստվում, որոնք հետագայում կշարունակվեն:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է

Լարսի ճանապարհը բացվել է թեթեւ մարդատար եւ ուղեւորատար տրանսպորտային միջոցների համար:

Այս մասին տեղեկացրել է Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան մաքսային կցորդ Վահան Հակոբյանը:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱ

ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐԴՈՒ ԳՈՐԾԸ

Խաչատուր Սամվելի Բալասանյանը հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքերի հանցավոր ծագումը, դրանց տեղաշարժը, տնօրինման եղանակը եւ պատկանելությունը թաքցնելու նպատակով ձեռք է բերել հոր՝ Սամվել Բալասանյանի, հանցավոր գործունեության արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքերը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետեւյալում.

ՀՀ կառավարության՝ 1995 թվականի հունիսի 6-ի թիվ 243 կարգադրությամբ ՀՀ Շիրակի մարզի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող «Սեւ Բերդ» կոչվող 25 հա հողատարածքն անհատույց օգտագործման իրավունքով հատկացվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

«ՀՀ Շիրակի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝2004 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1270-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով Սեւ Բերդ ամրոցն ընդգրկվել է ՀՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի՝ դեռեւս 2005 թվականի փետրվարի 24-ի թիվ 35 որոշմամբ պետական սեփականություն հանդիսացող 21.07 հա մակերեսով հողն ու դրա վրա առկա 626 քմ մակերեսով Սեւ Բերդ ամրոցն անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, որի հիմքով նույն օրը գրանցվել է նախարարության օգտագործման իրավունքը, իսկ Սեւ Բերդ ամրոցի նկատմամբ սեփականության իրավունքը:

Այնուհետեւ, Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2005 թվականի մարտի 31-ի թիվ 656 որոշմամբ հիշյալ 21.07 հա մակերեսով հողը բաժանվել է՝20.28 հա եւ 0.79 հա մակերեսների, որոնց նկատմամբ շարունակվել է պահպանվել ՀՀ ՊՆ օգտագործման իրավունքը եւ տրվել իրավունքի վկայականներ:

«ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 1089-Ն որոշման 5-րդ հավելվածի համաձայն՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողերի ցանկում «Սեւ Բերդ» կոչվող, 4 հա մակերեսով հողը, որի վրա գտնվել է Սեւ Բերդ ամրոցը, հանդիսացել է որպես հատուկ պահպանվող տարածքների հող, իսկ մնացածը համայնքին փոխանցվել է անհատույց՝որպես գյուղատնտեսական նշանակության հող՝արոտ:

Ռուբեն Ժորայի Սանոյանը 2015 թվականի փետրվարի դրությամբ զբաղեցնելով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը, պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող տեղեկանքում մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ, բացի այդ, միջոցներ տրամադրելով օժանդակել է Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանին՝ շահադիտական եւ խմբային շահերից ելնելով պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելուն, որն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետեւյալում.

Այսպես. ՀՀ կառավարության՝1995 թվականի հունիսի 6-ի թիվ 243 կարգադրությամբ ՀՀ Շիրակի մարզի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող «Սեւ Բերդ» կոչվող 25 հա հողատարածքն անհատույց օգտագործման իրավունքով հատկացվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

«ՀՀ Շիրակի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝2004 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1270-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով Սեւ Բերդ ամրոցն ընդգրկվել է ՀՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի՝ դեռեւս 2005 թվականի փետրվարի 24-ի թիվ 35 որոշմամբ պետական սեփականություն հանդիսացող 21.07 հա մակերեսով հողն ու դրա վրա առկա 626 քմ մակերեսով Սեւ Բերդ ամրոցն անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, որի հիմքով նույն օրը գրանցվել է նախարարության օգտագործման իրավունքը, իսկ Սեւ Բերդ ամրոցի նկատմամբ սեփականության իրավունքը:

Այնուհետեւ, Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2005 թվականի մարտի 31-ի թիվ 656 որոշմամբ հիշյալ 21.07 հա մակերեսով հողը բաժանվել է՝20.28 հա եւ 0.79 հա մակերեսների, որոնց նկատմամբ շարունակվել է պահպանվել ՀՀ ՊՆ օգտագործման իրավունքը եւ տրվել իրավունքի վկայականներ:

«ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 1089-Ն որոշման 5-րդ հավելվածի համաձայն՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողերի ցանկում «Սեւ Բերդ» կոչվող, 4 հա մակերեսով հողը, որի վրա գտնվել է Սեւ Բերդ ամրոցը, հանդիսացել է որպես հատուկ պահպանվող տարածքների հող, իսկ մնացածը համայնքին փոխանցվել է անհատույց՝որպես գյուղատնտեսական նշանակության հող՝արոտ:

Դեռեւս 2005 թվականի մայիսի 11-ին ՀՀ պաշտպանության նախարարության եւ Տիգրան Պետրոսյանի միջեւ կնքված առուվաճառքի պայմանագրով 626 քմ մակերեսով Սեւ Բերդ ամրոցի շենքը եւ 0.79 հա հողատարածքն օտարվել է վերջինիս, ով իր հերթին 2012 թվականի նոյեմբերի 15-ին հիշյալ գույքն ընդհանուր՝ 48.000.000 ՀՀ դրամով վաճառել է Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանին: Գործը ուղարկվել է դատարան:

ՔՆՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՑԱԾ Է ՆԵՏՎԵԼ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ

Երեկ ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Կեսգիշերին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բակում տղամարդու դի կա:

Դեպքի վայր են ժամանել ոստիկանության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Սամվել Խմելյանի, բաժնի պետի տեղակալ Գեւորգ Պողոսյանի գլխավորությամբ: Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, վաշտի հրամանատար Արմեն Զաքարյանի գլխավորությամբ: Ոստիկաններն ու պարեկները նշված բժշկական կենտրոնի բակում հայտնաբերել են բուժառու, Կոտայքի մարզում հաշվառված 61-ամյա Գարեգին Ա-ի դին: Ըստ նախնական տեղեկությունների՝ վերջինը նշված բժշկական կենտրոնի 5-րդ հարկի պատուհանից իրեն ցած է նետել: Դեպքի մասին ոստիկանության Մաշտոցի բաժնից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Էդգար Բալոյանի գլխավորությամբ:

Մահացածը Արցախի Հանրապետությունից էր բռնագաղթել, բուժում էր ստանում նշված բժշկական կենտրոնում եւ 5-րդ հարկի թիվ 8-րդ հիվանդասենյակի պատուհանից իրեն ցած է նետել:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՓՈՐՁԵԼ ԵՆ ՈՍԿՅԱ ԶԱՐԴԵՐ ՀԱՓՇՏԱԿԵԼ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթով առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Երեւան քաղաքի բնակիչներ Լ.Մ.-ն, Ռ.Գ.-ն եւ Ս.Ք.-ն նախնական համաձայնությամբ, խմբի կազմում 2024 թվականի սեպտեմբերի ընթացքում նախապատրաստել են Գեղարքունիքի մարզում բնակվող ամուսիններին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 77 մլն 446 հզր ՀՀ դրամից մինչեւ 116 մլն 169 հզր ՀՀ դրամ արժողության ոսկյա զարդերի եւ այլ թանկարժեք իրերի բացահայտ հափշտակությունը, սակայն չեն կարողացել սկսել հանցանքի կատարումը, քանի որ այն բացահայտվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից: Այս մասին հայտնում են Քննչական կոմիտեից:

Բացի այդ, Լ.Մ.-ն եւ Ռ.Գ.-ն նախնական համաձայնության են եկել միմյանց հետ՝էլեկտրաշոկի միջոցով տարադրամի փոխանակմամբ զբաղվող դեռեւս ինքնությունը չպարզված անձից բռնության գործադրմամբ խոշոր չափի՝ 3 մլն 870 հզր ՀՀ դրամ հափշտակելու հարցի շուրջ:Լ.Մ.-ի եւ Ս.Ք.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 43-253-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (առանձնապես խոշոր չափերով կողոպուտ նախապատրաստելը): Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Լ.Մ.-ի եւ Ս.Ք.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԽՆԴՐԻ

Ազգային ժողովի պատգամավոր Ռուստամ Բաքոյանը ներողություն պետք է խնդրի Էդգար Ղազարյանից՝ վճարելով 1 միլիոն դրամ փոխհատուցում: Այս մասին գրել է փաստաբան Վարազդատ Հարությունյանը:

«Ազգային ժողովում Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուներին ներկայացնելու համար հրավիրված նիստի ժամանակ Ռուստամ Բաքոյանը տասնյակ վիրավորական արտահայտություններ էր հնչեցրել հանրային-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի հասցեին: Դատարանը բավարարեց ներողություն խնդրելուն եւ պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանը պարտավորեցնելու պահանջները: Իսկ Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարաններն անփոխոխ թողեցին մեր վստահորդի օգտին կայացված վճիռը»,- գրել է նա:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 119 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉՈ՞Ւ Է ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱՔՑՆՈՒՄ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հետեւյալ հարցումն ենք արել. «2023 եւ 2024 թվականներին Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններից եւ ուսուցիչներից ովքեր են մասնակցել Երեւանում կայացած վերապատրաստման դասընթացներին, որոնք իրավունք են տալիս դպրոցների տնօրենների թափուր տեղերի համար մրցույթին մասնակցելու համար պահանջվող լիցենզիա ստանալ: Խնդրում ենք նշել բոլոր վերապատրաստվածների անուն-ազգանունները, նրանց դպրոցները, Երեւանում նրանց վերապատրաստման երկշաբաթյա ընթացքում դպրոցներում նրանց հաստիքները ժամանակավոր զբաղեցրածների, տնօրենների հրամաններով նրանց փոխարինած ուսուցիչների անուն-ազգանունները»: Մարզպետարանից պատասխանել են. «2023 եւ 2024 թվականներին Երեւանում կայացած հավաստագրման վերապատրաստումներին հայտ ներկայացրած ուսուցիչների եւ տնօրենների մասին Տավուշի մարզպետի աշխատակազմը տեղեկատվություն չունի: Վերապատրատման ընթացքում նրանց հաստիքները զբաղեցնում են սահմանված կարգի համաձայն համապատասխան անձինք՝ ըստ մասնագիտության եւ պաշտոնի»: Մարզպետարանն իր 80 աշխատակիցներով Տավուշի մարզի ընդամենը 2 ոլորտ է կառավարում՝ հանրակրթական դպրոցները եւ պետական առողջապահական հիմնարկները, մարզպետարանն ինչո՞ւ տեղեկություն չունի հավաստագրման վերապատրաստումներին հայտ ներկայացրած ուսուցիչների եւ տնօրենների մասին: Կարծում ենք, որ մարզպետը ունի այդ տեղեկությունը, սակայն այն չի տրամադրում, որովհետեւ այդ վերապատրաստումների շատ մասնակիցների փոխարեն, վերապատրաստումների ժամանակաշրջանում դպրոցների տնօրենների կողմից համապատասխան հրամաններով փոխարինվողներ չեն նշանակվել, վերապատրաստվողները շարունակել են դպրոցում իրենց աշխատավարձն ստանալ: Տեղի է ունեցել պետբյուջեի գումարների մսխում:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԼՈՂԸ ՑԱՄԱՔՈ՞ՒՄ ԵՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է դրամաշնորհի հատկացման մրցույթ՝ մարզերում դպրոցահասակ երեխաների առողջ ապրելակերպի խրախուսման փորձնական ծրագրի իրականացման շրջանակում: Ծրագրի նպատակն է դպրոցահասակ երեխաների շրջանում խթանել առողջ ապրելակերպը, նրանց ներգրավել լող մարզաձեւի ուսուցման, զարգացման եւ սպորտի մեծ նվաճումների գործընթացում: Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներից միայն Իջեւանի թիվ 1 դպրոցում լողավազան կա, տավուշցի աշակերտները լողը ցամաքո՞ւմ են սովորելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼՆ ԱՌՈՂՋԱՑՆԵԼ Է ՀԱՐԿԱՎՈՐ

ՊԵՏՔ Է ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄՇԱԿԵԼ

Անցյալ տարվա հոկտեմբերի 13-ին Ֆուտբոլի Ազգային Հավաքականը պարտվեց Հյուսիսային Մակեդոնիայի հետ դիմակայությունում: Խաղից հետո հեռացվեց այդ ժամանակ գործող մարզիչ, ուկրաինացի մասնագետ Ալեքսանդր Պետրակովը: Սակայն միայն մարզչի հեռացումը չբավարարեց շատ ֆուտբոլասերների, եւ նրանք պահանջեցին Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի (ՀՖՖ) նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականը: Հրաժարականի պահանջին միացան նաեւ մի շարք ֆուտբոլային ակումբներ: Այս ամենի եւ առհասարակ ֆուտբոլային խնդիրների վերաբերյալ Armlur.am-ը զրուցել է Հայկական Առաջին Ճակատի (FAF) հիմնադիր անդամ Սերգեյ Ջանջոյանի հետ:

Հարցազրույցի առաջին մասը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի նախորդ՝ 3055 համարում (26.02.2025 թվական):

Զրուցել ենք ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականի, Հայաստանի հավաքականի ապագայի խաղերի, մասնավորապես՝ Հայաստան-Վրաստան խաղի վերաբերյալ, ինչպես նաև առաջիկա ակցիաների մասին, որոնք կկազմակերպվեն ՖԱՖ-ի կողմից:

-Պարոն Ջանջոյան, Դուք տարբերակներ ունե՞ք ՀՖՖ նոր ղեկավարի վերաբերյալ, եւ ի՞նչ քայլեր պետք է անի նա: Ունե՞ք որոշակի կոնկրետ պահանջներ կամ առաջարկներ:

-Նախկին սխալները չգործելու համար՝ մենք պատկերացնում ենք, որ ՀՖՖ ղեկավարության հեռացումից հետո մենք պետք է ստեղծենք համերաշխության հարթակ, որտեղ կներգրավվեն ֆուտբոլի շահառուները, մեր հայկական ֆուտբոլային աշխարհի ներկայացուցիչները, եւ տարբեր, շատ երկար քննարկումների միջոցով, նաեւ համապատասխան մասնագետների ներգրավվածությամբ մենք կարողանանք մշակել մեզ բնորոշ, մեր առանձնահատկություններին համապատասխանող ազգային ծրագիր՝ իրական ազգային ծրագիր, որը կտանի մեր ֆուտբոլը առողջացման, որը կտանի այն զարգացման՝ հավասարաչափ զարգացման ամբողջ հանրապետությունում:

-Ազգային հավաքականը ունի նոր մարզիչ, ի՞նչ կարծիք ունեք հոլանդացի մասնագետի վերաբերյալ, գո՞հ եք նրա նշանակումից:

-Կարծում եմ՝ մենք ունեցանք մարզիչ. ոչ թե հատուկ չափորոշիչներով մարզիչ էր մեզ պետք, այլ պետք էր մարզիչ, ով կհամաձայներ ներկա իրավիճակում գալ եւ գլխավորել հավաքականը:

Ես մասնավոր որակումներ չեմ կարող տալ մարզչի մասին, իհարկե, ժամանակը ցույց կտա: Կարելի է ասել՝ ավելի թույլ ճանապարհ անցած մարզիչ է, որը գլխավորել է հավաքականը եւ հաջող հանդիպումներ է ունեցել, բայց հավատալ, որ այս իրավիճակում մենք կարող ենք լուրջ բանի հավակնել, ցավոք չեմ կարող հուսալ:

Զրուցեց ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

5 ՄԼՆ ԴՈԼԱՐԱՆՈՑ ՔԱՐՏԵՐ

Թրամփը հայտարարել է, որ ԱՄՆ-ն երկու շաբաթից սկսելու է golden card-երի վաճառքը: Քարտի արժեքը հինգ միլիոն ԱՄՆ դոլար է. այն նախատեսված է հարուստ օտարերկրացիների համար, որոնք կգնեն քարտը՝ ապահովելով ԱՄՆ-ում օրինական ապրելու եւ աշխատելու իրավունքը: Համապատասխան ժամկետից հետո, նրանք կկարողանան դառնալ ԱՄՆ քաղաքացի: «Մենք պատրաստվում ենք golden card վաճառել: Դուք ունեք green card, սա golden card է: Մենք պատրաստվում ենք այդ քարտը վաճառել մոտ 5 միլիոն դոլարով: Այն ձեզ կտրամադրի green card-ի արտոնություններ, գումարած՝ այն կապահովի քաղաքացիություն ստանալու ճանապարհը: Եվ այս քարտը գնելով՝ հարուստ մարդիկ կմտնեն մեր երկիր», ասել է Թրամփը՝ կանխատեսելով, որ միլիոնավոր քարտեր կարող են վաճառվել: Հարցին՝ ԱՄՆ-ն պատրաստվո՞ւմ է ռուս օլիգարխներին եւս վաճառել նման քարտեր, Թրամփը պատասխանել է. «Այո, հնարավոր է: Ես ճանաչում եմ որոշ ռուս օլիգարխների, որոնք շատ լավ մարդիկ են»:

Նմանօրինակ ծրագիր ԱՄՆ-ում կա. այն ներդրվել է Կոնգրեսի կողմից դեռեւս 1992 թվականին: Սա, ըստ էության, EB-5 ծրագիրն է, որով green card է տրամադրվում այն ներգաղթյալներին, որոնք նվազագույնը 800 հազարից մինչեւ 1,5 միլիոն ներդրում են կատարում ԱՄՆ տնտեսության մեջ: Տնտեսական գործունեության տեսակները, որտեղ պետք է ներդրում անել, խիստ կանոնակարգված էր մինչ այժմ: Ներդրում պետք է արվեր այսպես կոչված անապահով գոտիներում, որտեղ աշխատատեղերի խնդիր կա:

Ի դեպ ընտրություններից հետո Թրամփի վարկանիշը շարունակում էր աճել, իսկ Մասկինը՝ կտրուկ նվազել: Տանդեմը բավականին հետաքրքիր է աշխատում՝ սերը Թրամփին, ատելությունը Մասկին: Վերջին 10 օրերին, սակայն, Թրամփի վարկանիշը բավականին ընկել է հենց իր ընտրողների շրջանում: 13 տարվա մեջ առաջին անգամ Tesla-ի շուկան սկսել է անհաջողություններ գրանցել: Որոշ նահանգներում անգամ մարդիկ հարձակվել են Tesla-ի սալոնների վրա՝ վնասելով սրահները:

10 ՏԱՐԻ ԿՊԱՀԱՆՋՎԻ

Եվրոպական երկրներին մոտ 10 տարի կպահանջվի մարտունակ զինված ուժեր եւ հզոր ռազմարդյունաբերական համալիր ձեւավորելու համար, որը կախված չի լինի ԱՄՆ-ից: Եվրոպական շատ երկրների համար այսօր դժվար կլիներ թեկուզ մեկ մարտունակ բրիգադ ստեղծել, մինչդեռ ուկրաինական հակամարտությունը երկու կողմից ներառում է մոտ 230 նման ստորաբաժանումներ: Եվրոպական «Bruegel» վերլուծական կենտրոնի հաշվարկների համաձայն՝ Եվրոպան պետք է 50 նոր բրիգադներ ձեւավորեր՝ փոխարինելու 300,000 ամերիկյան զինվորականներին, որոնք կարող են տեղակայվել մայրցամաքում պատերազմի դեպքում: Միաժամանակ, ինչպես նշել է ամսագիրը, եվրոպական երկրներին անհրաժեշտ է զգալի միջոցներ հատկացնել տեխնոլոգիական ինքնավարության համար: Ջասթին Բրոնքը, Լոնդոնում տեղակայված Royal United Services Institute for Defense and Security Studies (RUSI) գիտաշխատող, ասում է, որ Եվրոպան գրեթե ամբողջությամբ կախված է ԱՄՆ-ից հետախուզության, հսկողության, թիրախների ձեռքբերման եւ հետախուզման հարցերում: RUSI-ի մեկ այլ փորձագետ Մեթյու Սավիլն ասել է, որ ներդրումներ են անհրաժեշտ եվրոպական ռազմական բոլոր ճյուղերում: Նա, մասնավորապես, կարծիք է հայտնել, որ նույնիսկ Մեծ Բրիտանիան, որն ունի բավականին հզոր օդուժ, չի կարողանա երկարաժամկետ ինտենսիվ օդային արշավ իրականացնել, ինչպիսին Իսրայելն է իրականացնում Գազայի հատվածում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 2 մարդ զոհվել է, 4-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հայանիստ բնակավայրում հայտնաբերել են ապօրինի խորքային հոր: Տեսչական մարմնից հայտնում են, որ պարզվել է, որ քաղաքացի Զ. Բ.-ի կողմից տարածքի պտղատու ծառերի ոռոգման եւ խմելու նպատակով իրականացվել է ապօրինի ջրառ՝ առանց համապատասխան ջրօգտագործման թույլտվության: Տեսչական մարմնի Արարատի տարածքային բաժնի պետի որոշմամբ ապօրինի խորքային հորի շահագործումը կասեցվել է:

Իրավախախտը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային կենտրոնի տեսուչներն անհատ ձեռնարկատեր «Գայանե Բաղալյան» ԱՁ-ին պատկանող սոյայի մթերքի՝ տոֆուի արտադրությունում անցկացվող ստուգման ընթացքում պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով (Լոռու մարզ, գ. Մարգահովիտ): Այս մասին տեղեկացնում են ՍԱՏՄ-ից: Մասնավորապես, արտադրական շինության կառուցվածքը չի ապահովել պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի խաչաձեւող հոսքերը, արտադրությունը սարքավորված չի եղել բնական եւ մեխանիկական օդափոխության միջոցներով, չեն եղել սանհանգույց եւ անձնակազմի համար հանդերձարան:

Տոֆուի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԱՄԱՌԱՅԻՆ ՁՈՐԱԿՈՉ

2025թ. ապրիլի 14-ից մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ Հայաստանում կանցկացվի ամառային զորակոչ: Այդ մասին տեղեկանում ենք e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքից: «2025թ. ապրիլի 14-ից մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ Հայաստանում կանցկացվի արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է կամ որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2025 թ. հունիսի 30-ը ներառյալ», - ասվում է որոշման նախագծի մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արմեն Վաչիկի Մուրադյանս, հայտնում եմ, որ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ-ից ձեռք բերված YTO-404 մակնիշի տրակտորի 98-73 SL համարանիշերը կորել են: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 95 769 999 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավորմամբ Հայաստանում սկսում է նոր նախաձեռնություն՝ ուղղված երկրի բուժաշխատողների կարողությունների եւ հոգեկան առողջության համակարգի հզորացմանը: Այս մասին հաղորդում է ԱՀԿ հայաստանյան գրասենյակը:

«Նախաձեռնությունն Արեւելյան գործընկերության հինգ երկրում իրականացվող առողջապահական կայուն համակարգի ձեւավորմանն ուղղված ավելի ընդարձակ ծրագրի մի մաս է: Երեւանում պաշտոնապես մեկնարկած ծրագիրը նշանակալի իրադարձություն է ԵՄ-ԱՀԿ համագործակցության համար՝ ուղղված դիմակայուն եւ ավելի առողջ Հայաստանի կառուցմանը: COVID-19 համավարակը բացահայտել է աշխարհում առողջապահական համակարգերի ինչպես ուժեղ, այնպես էլ խոցելի կողմերը՝ հատկապես ընդգծելով առողջապահության ոլորտում դիմակայուն եւ աջակցություն վայելող բուժաշխատողների առկայության կարեւորությունը: Հայաստանում, ինչպես ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի շատ երկրներում, բուժաշխատողների պակասը, նրանց անհամաչափ բաշխվածությունը, սթրեսի ու մասնագիտական այրման լայն տարածվածությունը հսկայական ճնշում են գործադրել առողջապահական համակարգերի վրա: Երկար ժամանակ անտեսված հոգեկան առողջությունը եւս առաջնահերթություն է դարձել, քանի որ ավելի ու ավելի է ճանաչվում համայնքահենք, մարդակենտրոն եւ մարդու իրավունքների վրա հիմնված հոգեկան առողջության ծառայությունների անհրաժեշտությունը: Այսպիսի ծառայությունները նվազեցնում են խարանը եւ բարձրացնում են բուժման եւ խնամքի հասանելիությունը:

«Հոգեկան առողջությունը մարդու համընդհանուր իրավունք է, որի պահպանումը կենսական է անձի ընդհանուր առողջության եւ բարեկեցության համար: Ուստի մենք մշակել եւ հաստատել ենք «Հոգեկան առողջության պահպանման եւ բարելավման միջոցառումների ծրագիր», սահմանել ենք մասնագետի գործունեության էթիկայի կանոնները, պատրաստել ենք կլինիկական ուղեցույցներ եւ գործելակարգեր, ինչպես նաեւ իրականացնում ենք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ դասընթացներ: Սակայն այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է նաեւ ամուր եւ լավ պատրաստված առողջապահական անձնակազմ: Այս նախաձեռնությունը մեզ հնարավորություն է տալիս լուծելու բուժաշխատողների հիմնական մարտահրավերները՝ ստեղծելով ավելի բարենպաստ աշխատանքային պայմաններ, բարձրացնելով մասնագետների պատրաստվածության մակարդակը եւ ապահովելով մասնագետների շարունակական զարգացումը: Միայն ուժեղ եւ պաշտպանված բուժանձնակազմի միջոցով կարող ենք հասնել առողջապահական ծառայությունների ամբողջական եւ արդյունավետ ներդրմանը՝ յուրաքանչյուր քաղաքացու համար հասանելի դարձնելով որակյալ բուժօգնությունը»,- նշել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Հայաստանում Եվրոպական միության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը նշել է, որ ԵՄ-ն հանձնառու է աջակցել Հայաստանի առողջապահության ոլորտին՝ ապահովելով, որ այսօրվա ներդրումները տանեն տեւական եւ էական փոփոխությունների:

«Ծրագրի մեկնարկը կարեւոր քայլ է բուժաշխատողների շրջանում ներդրումներ կատարելու եւ նրանց աջակցելու, ինչպես նաեւ հոգեկան առողջության ծառայությունների ինտեգրվածությունն ու հասանելիությունն ապահովելու համար», - ասել է Սիդարթա Դատտան:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Գործարանային փողոց, 2/8 հասցեում գտնվող 35899,94 քմ ընդհանուր մակերեսով արտադրական նշանակության անշարժ գույքեր (համաձայն 20.01.2025թ. N20012025-06-0025 իրավունքների պետական գրանցման վկայականի) եւ 8,212 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 650000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Աթենքի փողոց, 3/3 հասցեում գտնվող 92,8 քմ առեւտրի սրահ, 0,003 հա հողամաս (վարձակալություն) եւ 0,003 հա (հողամասի կառուցապատման իրավունք): Հողամասը ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Լոտի մեկնարկային գինը՝ 75000000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, Գավառ ք., Նալբանդյան փողոց, 14-րդ փակուղի, 18 հասցեում գտնվող 335,8 քմ բնակելի տուն, 53,5 քմ ավտոտնակ, 55,9 քմ անասնաշենք, 40,4 քմ անասնաշենք, 33,6 քմ խոհանոց, 38,1 քմ ծածկ եւ 0,3022 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25500000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 17.03.2025թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ՝ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հանրության շրջանում ցանկացած տոն առաջացնում է մեծ հետաքրքրություն, շատերն անգամ մեծ սիրով ու դատապարտանատվությամբ դատրաստվում են, այդ թվում՝ եկեղեցական տոներին: Առջեւում Սուրբ Հարության տոնն է, կամ ինչպես ընդունված է անվանել ժողովրդի շրջանում՝ Զատիկը, Հայ առաքելական Սուրբ եկեղեցու ամենագեղեցիկ ու սիրված տոներից մեկը:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է տոնի նշանակությունը, խորհուրդն ու մինչեւ տոնն ընկած ժամանակահատվածի՝ Մեծ պահքի մասին:

Այսպիսով, Սուրբ Հարության տոնը քրիստոնյա աշխարհի մեծագույն իրադարձություններից մեկն է: Հիսուս Քրիստոսի հարությունը քրիստոնեության հիմքն է եւ երկու հազար տարի Զատիկը տոնվում է որպես ազատագրում մեղքերից, ապաշխարություն եւ վերադարձ առ Աստված: Ինչպես նշեցինք վերեւում՝ տոնն անվանում են նաեւ Զատիկ, ինչը նշանակում է զատվել, ազատվել մեղքերից եւ վերադառնալ Աստծուն: Տոնը սիրելի է հատկապես փոքրիկների կողմից, քանի որ տոնին հավկիթ են ներկում կարմիր գույնով: Դեռ հնուց հայերի շրջանում տարածված է հավկիթների հայտնի խաղը, սակայն հավկիթները ներկելն էլ ունի իր իմաստը: Հավկիթը համարվում է հարության եւ նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշը, իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար Արյունը, որ թափվեց մեր փրկության համար:

Սուրբ Գրիգոր Տաթեւացին հավկիթը կարմիր ներկելու մասին ասել է. «Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրինակ է աշխարհի, եւ, ինչպես իմաստուններն են ասում, «դրսի կեղեւը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Մինչեւ բուն տոնը հավատացյալ քրիստոնյաները 40 օր պահք են պահում, ինչն իրենից ենթադրում է ոչ միայն կենդանական ուտեստներից հրաժարում, այլեւ հրաժարում շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյախոսություններից եւ այլ մեղքերից: Եթե հրաժարվեք միայն կենդանական ծագում ունեցող ուտեստներ ճաշակելուց, սակայն շարունակեք գործել մեղքեր, ապա կարելի է ասել, որ ամեն բան անօգուտ է:

Հիսուս Քրիստոս «Լեռան Քարոզ»-ում ասել է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երեւալը եւ նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծիր քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»:

Պահոց շրջանում կարեւոր է հավատացյալ քրիստոնյաների կանոնավոր մասնակցությունը Սուրբ Պատարագներին, առավոտյան եւ երեկոյան կատարվող ժամերգություններին:

Իսկ ի՞նչ է խորհրդանշում պահոց 40 օրը, ինչո՞ւ հենց 40 օր:

Պահքի 40 օրը խորհրդանշում է անապատում Քրիստոսի քառասնօրյա աղոթքի, ծոմապահության եւ ապաշխարության շրջանը: Եկեղեցին Քրիստոսի օրինակին հետեւելով՝ հաստատեց քառասնորդական պահքը, որը կոչվում է նաեւ Մեծ Պահք:

Նշենք, որ այս տարի՝ 2025-ին, Մեծ Պահքի շրջանը սկսվել է փետրվարի 28-ից եւ հավատացյալ քրիստոնյաները այդ օրվանից սկսած հրաժարվել են աշխարհիկ հաճույքներից:

Մեծ Պահքին հաջորդելու է մեծագույն եւ սպասված ավետիսը՝ Հիսուս Քրիստոսի Հարությունը:

Հավելենք, որ տոնը շարժական է եւ այս տարի Սուրբ Հարության տոնը՝ Զատիկը, նշվելու է ապրիլի 20-ին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԻՉԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԷ

Գվարդիոլան չի համաձայնել, որ կարիերայի ամենաբարդ փուլն է ապրում: «Մանչեսթեր Սիթիի» գլխավոր մարզիչ Պեպ Գվարդիոլան պատասխանել է այն հարցին, թե արդյոք «քաղաքայիների» ներկայիս խնդիրները նրա պրոֆեսիոնալ կարիերայի ամենադժվար մարտահրավերն են: Պրեմիեր լիգայի 26 տուրից հետո «Մանչեսթեր Սիթին» զբաղեցնում է մրցաշարային աղյուսակի 5-րդ հորիզոնականը՝ առաջատար «Լիվերպուլին» զիջելով 20 միավորով: «Ոչ: Մենք նախկինում անցել ենք դրա միջով:

Ինը տարի անց մենք չունենք նույն թիմը, որով սկսել ենք: Սա ամենամեծ խնդիրը չէ, ավելի մեծերն են եղել: Երբ ես նոր էի սկսում կարիերաս, իմ եւ իմ թիմի առջեւ բազմաթիվ մարտահրավերներ են առաջ եկել, եւ մենք միասին ապացուցել ենք, որ կարող ենք հաղթահարել դրանք», - Գվարդիոլայի խոսքերն է մեջբերում իսպանական AS առցանց հրատարակությունը:

Հիշեցնենք, որ Գվարդիոլան «Մանչեսթեր Սիթիում» է 2016 թվականից: Նախկինում իսպանացին մարզել է Մյունխենի «Բավարիան» եւ կատալոնական «Բարսելոնան:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ ՀԱՅՏՆԻ Է

Իսպանացի հարձակվող Ալվարո Մորատան նշել է 2024/2025 մրցաշրջանի միջնամասում իտալական «Միլանից» թուրքական «Գալաթասարայ» իր ձմեռային տեղափոխության պատճառը:

«Սկզբում ես ցանկանում էի խաղալ «Միլանում» բացառապես Պաուլո Ֆոնսեկայի ղեկավարությամբ: Նրա պաշտոնանկությամբ ամեն ինչ կորցրեց իր նշանակությունը: Ես այլեւս ինձ հարմարավետ չէի զգում ակումբում»,-ասել է Մորատան:

Հիշեցնենք, որ Մորատան թուրքական ակումբի հետ վարձակալության պայմանագիր է կնքել մինչեւ 2026 թվականի հունվարի 20-ը: Պայմանագիրը ներառում է վարձակալության ժամկետը մինչեւ 2026 թվականի ավարտը երկարաձգելու տարբերակ, ինչպես նաեւ Ստամբուլի ակումբներից մեկի՝ նրա պայմանագրի գնման հնարավորությունը, եթե նրանք դա ցանկանան:

Այս մրցաշրջանում հարձակվողը «Միլանի» կազմում անցկացրել է 25 հանդիպում բոլոր մրցաշարերում՝ դառնալով 6 գոլի եւ երկու գոլային փոխանցման հեղինակ: «Գալաթասարայի» կազմում իսպանացին չորս խաղում երկու գոլ է խփել: Ֆուտբոլիստի գործող պայմանագիրը «Միլանի» հետ, ուր նա տեղափոխվել է անցյալ ամառ «Ատլետիկոյից», նախատեսված է մինչեւ 2028 թվականի ամառը: Transfermarkt-ի տեղեկություններով՝ 32-ամյա ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 13 միլիոն եվրո:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԲ ԿՎԱՃԱՌԵՆ iPhone 17–Ը

iPhone ապրանքանիշի շուրջ պտտվող նորությունները շատ կարճ ժամանակում են տարածվում: Սա բոլոր ժամանակների ամենանշանավոր եւ ազդեցիկ տեխնոլոգիական գաջեթներից մեկն է, եւ բոլորն ուզում են իմանալ, թե ինչ է սպասվում հաջորդիվ: Հենց այս հետաքրքրությունը ավելի ակտիվ պահելու նպատակով կազմակերպությունը գաղտնիություն է պահում եւ տեղեկատվության հարցում բավական ժլատ է, սակայն ապահովում է դրանց արտահոսքը:

Հետաքրքրական էր օրինակ այն, որ iPhone 16-ի շուկայում հայտնվելուց առաջ արդեն արտահոսք էր եղել iPhone 17-ի վերաբերյալ: Սակայն, քանի որ Apple-ը պաշտոնապես ոչինչ չի հայտարարել դժվար է գուշակել, թե երբ վաճառքի կհանվի iPhone 17-ը, սակայն կարելի է ենթադրել, որ այն շուկայում կհայտնվի սեպտեմբերի 9-ին. սովորության համաձայն՝ հենց սեպտեմբերի 2-րդ շաբաթվա երեքշաբթի օրն է կազմակերպությունը վաճառքի հանում նոր մոդելները:

ԷՐԻԿԸ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Երգիչ Էրիկ Կարապետյանի «Ոչ ավել, ոչ պակաս» երգը ռուսական ալիքով ներկայացրել են որպես ադրբեջանական երգ: ««Ոչ ավել, ոչ պակաս» երգը տարիներ շարունակ անօրինական կերպով ձեւափոխել, աղավաղել ու կատարել են աշխարհի տարբեր լեզուներով ու երկրներում՝ առանց որեւէ թույլտվության...

Ես լռել եմ: Բայց համբերությանս բաժակը լցվեց, երբ օրեր առաջ ռուսական Россия 1 պետական ալիքով «Воскресное шоу Андрея Малахова»-ի եթերում արդեն երկրորդ անգամ, առանց որեւէ թույլտվության, իմ երգը հնչեց աղավաղված տարբերակով՝ այս անգամ ադրբեջանցիների կատարմամբ: Ու ցավալին ու ամոթալին այն է, որ այն ներկայացվեց որպես ադրբեջանական երգ:

Երգը գրել եմ 2018 թվականին՝ Երեւանում: Երաժշտության հեղինակը ես եմ, խոսքերի հեղինակը՝ Գրիգոր Կյոկչյանը:

Հարցին տվել եմ իրավական ընթացք եւ օրենքի սահմաններում պայքարելու եմ մինչեւ վերջ իմ հեղինակային իրավունքների համար: Նշեմ, որ ստեղծագործությունն առանց հեղինակի թույլտվության օգտագործելը, փոփոխելը հեղինակային իրավունքի խախտում է եւ ստեղծագործության աղավաղում: Ցավ եմ ապրում, որ մեր հայրենակիցների ստվար զանգված լսում է հենց այդ տարբերակները: Բայց նաեւ ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր բոլոր այն հայրենակիցներին, ովքեր տեսնելով այս ամենը՝ արձագանքում են եւ իրենց աջակցությունն են հայտնում ինձ»,- սոցիալական ցանց իր էջում գրել է երգիչը:

● *Hard Rock Cafe Yerevan-ում մարտի 3-ին տեղի կունենա Women՛s Club ստենդափը: Տոմսերի արժեքը՝ 10000, 12000, 15000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հեսարրիր է իմանալ՝ արդյոք միայն վարդապետնե՞րը կարող են լինել կուսակրոն, թե՞ յուրաքանչյուր քահանա՝ իր ցանկությամբ, կարող է լինել կուսակրոն:

Հերմինե Սահակյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ կուսակրոն կամ ամուսնացյալ քահանա դառնալու որոշումը կայացնում են մինչեւ ձեռնադրվելը՝ սարկավագ եղած ժամանակ: Թե ամուսնացյալ, թե կուսակրոն սարկավագները քահանա են ձեռնադրվում նույն ծեսով, կարող են անգամ միաժամանակ ձեռնադրվել: Նույն օրը՝ երեկոյան, ձեռնադրող եպիսկոպոսը կամ կաթողիկոսը կուսակրոնության ճանապարհ ընտրած քահանաներին տալիս են վեղար, որը չեն կարող կրել ամուսնացյալները:

Քահանա են կոչվում բոլոր ձեռնադրվածները՝ կուսակրոն, թե ամուսնացյալ, սակայն ի տարբերություն ամուսնացյալ քահանաների՝ կուսակրոններն իրավունք ունեն ստանալ մի քանի աստիճան՝ աբեղա, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս: Հաճախ հայրաբանական գրականության մեջ նրանց բոլորին կոչում են քահանա:

Օրինությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Ամուսնացյալներին կուսակրոններից տարբերում են վեղարով: Դա գլխի բրգաձեւ ծածկոց է, որը կրում են միայն կուսակրոնները:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր պետք է դիմեն երեխայի խնամքի նպաստ ստանալու համար:

Հրաչուհի Մարտիրոսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ մինչեւ 2023 թ. հունվարի 1-ը ծնված երեխաների դեպքում, խնամքի նպաստի իրավունք ունեն երեխայի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը մինչեւ երեխայի երկու տարեկանը լրանալը:

Խնամքի նպաստի իրավունք ունի նաեւ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված եւ փաստացի բնակվող ծնողը մինչեւ երեխայի երկու տարեկանը լրանալը, եթե խնամքի նպաստի համար դիմելու օրվա դրությամբ առնվազն մեկ տարի անընդմեջ հաշվառված է գյուղական բնակավայրի հասցեով: Այս դեպքում ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք, եթե խնամքի նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացի ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք, եթե բավարարում է վերը նշված պայմանները, եւ երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Երեկ խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Գեւորգ Չաուշի փողոցում բախվել են Hyundai Sonata, Suzuki եւ Opel մակնիշի ավտոմեքենաները:

Բարեբախտաբար տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 - 20 -4 - 7
Կոտայքի լեռներ	-15 - 19 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-16 - 20 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-16 - 20 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-15 - 20 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-12 - 17 -2 - 5
ԼՂՀ	-11 - 15 -2 - 4
Երեւան	-5 - 9 -4 - 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*